



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 02/18**

21.03.2018թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (**այսուհետ՝ Կենտրոն**), քննարկելով «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 25.12.2006թ., ուժի մեջ է մտել 10.02.2007թ., ՀՕ-55-Ն)¹ 36-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

«Ռայվ Ինտերթերեյր» ՍՊԸ-ն և քաղաքացի Դավիթ Պետրոսյանը (ներկայացուցիչ՝ Աշոտ Թորոսյան, այսուհետ՝ Դիմող) 14.11.2017թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասը, 36-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ, 119-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անհամապատասխանության վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության շրջանակներում ճանաչել իրավական որոշակիության սկզբունքին և ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածին, 3-րդ հոդվածի 2-րդ մասին, 28-րդ հոդվածին, 29-րդ հոդվածին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող:

ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը անհատական դիմումի ընդունելիության հարցը քննարկելիս որոշել է նշված անհատական դիմումով գործի քննության ընդունումը՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, 36-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի, 105-րդ հոդվածի 3-րդ մասի, 119-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի դրույթների մասով, մերժել, իսկ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի մասով՝ ընդունել քննության:

¹ Տե՛ս ՀՀՊՏ 2007.01.31/8(532):

Դիմողի հիմնավորումները «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակիրառական պրակտիկայի հակասահմանադրականության վերաբերյալ մասնավորապես հանգում են հետևյալին.

Դիմողը գտնում է, որ օրենսդիրը նախատեսելով արբիտրաժային վճռի չեղարկման նախապայմաններ և դիմելու հնարավորություն, միաժամանակ տալիս է հնարավորություն դատարան ներկայացնել միջնորդություն արբիտրաժի վճիռը պարտադիր ճանաչելու և կատարողական թերթ ստանալու համար:

Մինչդեռ, ըստ Դիմողի, այն հանգամանքը, որ արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու մասին դիմումը կարող է ներկայացվել արբիտրաժային տրիբունալի կողմից վճիռը ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում, պետք է բացառի արբիտրաժի վճիռը պարտադիր ճանաչելու և կատարողական թերթ ստանալու մասին միջնորդություն ներկայացնելու և այն քննության առարկա դարձնելու հանգամանքը:

Տվյալ դեպքում իրավակիրառ պրակտիկայում այդ «բացը» (երկու գործողությունների միաժամանակյա քննարկում), Դիմողի կարծիքով, անհամապատասխանություն է ստեղծում դատարանի կողմից չեղարկման դիմումի քննության և զուգահեռ վճիռը ճանաչելու և կատարողական թերթ տրամադրելու միջև, քանի որ ստացվում է, որ մի դեպքում դատարանը քննում է վճռի օրինականությունը, մեկ այլ դեպքում մինչև վճռի օրինականության հարցի վերաբերյալ վերջնական լուծումը դատարանը կայացնում է դատական ակտ:

Դիմողի կարծիքով՝ «արբիտրաժային վճռի չեղարկումը ենթադրում է ՀՀ իրավասու դատարանի կողմից այդ դատական ակտի ճանաչմանը կամ հարկադիր կատարմանը խոչընդոտող՝ օրենքով ամրագրված հիմքերի առկայության ստուգում՝ նշված հանգամանքների պարզման ուղղությամբ իրավասու դատարանի գործողությունների օրինականությունը և հիմնավորվածությունը բողոքարկելու իրավական հնարավորություններով բացառելու դատական սխալը՝ դրանով իսկ նպաստելով արդարադատության նպատակների գործնականում իրականացմանը, և քանի որ «Արբիտրաժային տրիբունալի մասին» ՀՀ օրենքով որոշակի ընթացակարգ սահմանված չէ, ըստ էության, նշված հարցի լուծումը նույնպես թողնվել է քաղաքացիադատավարական օրենսդրության կարգավորմանը»:

Դիմողը գտնում է, որ այդպիսի իրավական կարգավորումների իրավակիրառական պրակտիկան հակասում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված արդար դատաքննության իրավունքին և իրավական որոշակիության սկզբունքին:

Սույն գործով ՀՀ սահմանադրական դատարանում գործի քննությունը նշանակված է 2018թ. մարտ 27-ին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության, ինչպես նաև իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքների բովանդակությունը ՀՀ սահմանադրական

դատարանի և Եվրոպական դատարանի դատական պրակտիկային համապատասխան մի շարք գործերով արդեն իսկ բացահայտվել է Կենտրոնի կողմից նախկինում տրված եզրակացություններով:

ՀՀ գործող Սահմանադրությամբ անձի՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող սահմանադրաիրավական նորմերի բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 3. Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները

1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Հոդված 61. Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

...

Հոդված 63. Արդար դատաքննության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

...

Նշված սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված սահմանադրության 18 և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներում:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներով, բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև Ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների

Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ **իրավական բավարար նախադրյալների ստեղծումն** ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Միաժամանակ, կարևորվել է այդ պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:

Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար **արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը:**

Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է¹:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է **պետության պոզիտիվ պարտականությունը՝** ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, **օրենսդրի պարտականությունը՝** լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, **իրավակիրառողի պարտականությունը՝** առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:²

ՀՀ Սահմանադրության՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող 18-րդ հոդվածը ՀՀ սահմանադրական դատարանի դատական պրակտիկայում, որպես կանոն, վկայակոչվում է 19-րդ հոդվածի հետ սերտ միասնության մեջ՝ որպես իրենից մեկ միասնական իրավական երևույթ ներկայացնող: Դա մասնավորապես վերաբերում է **արդարադատության մատչելիության իրավունքին՝** որպես արդար դատաքննության իրավունքի տարրի, որի սահմանադրական ամրագրումը դիտարկվում է 18-րդ և 19-րդ

¹ ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. հունվարի 16, ՍԴՈ-673, 8-րդ կետ:

² ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:

հողվածներում՝ միաժամանակ և միասնաբար՝ չկոնկրետացնելով դրա սահմանադրական-տեքստային հիմքը¹:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված արդարադատության մատչելիության իրավունքի՝ որպես արդար դատաքննության իրավունքի տարրի հիմնարար սահմանադրական երաշխիքներն են՝ ա) դատական քննության հավասարություն և արդարացիություն, բ) անկախ և անկողմնակալ դատարան, գ) դատական քննության ողջամիտ ժամկետ և դ) հրապարակայնություն:

Արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. **«Դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է հանդիսանում մատչելիության իրավունքը, չի հանդիսանում բացարձակ իրավունք և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ այն իր էությամբ պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել՝ կախված ժամանակից և տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ անձանց պահանջմունքներին և միջոցներին համապատասխան: Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էությունը, և դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետին, եթե ունեն օրինական նպատակ և կիրառված միջոցների և դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն»²:**

Եվրոպական դատարանը միաժամանակ գտնում է. **«Բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետների կարգավորումը, անկասկած, նպատակ ունի ապահովել արդարադատության պարզաճ իրականացումը, հատկապես իրավական որոշակիության սկզբունքը: Շահագրգռված անձինք պետք է հաշվի առնեն, որ այդ կանոնները պետք է կիրառվեն»³:**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ **անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել** անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսպիսով, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով ամրագրված (2005թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներ) դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության էությունն անձի իրավունքների և ազատության պաշտպանության համար դատարան դիմելու, այդ թվում՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի

¹ ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2010, էջեր 222-223:

² Golder v. United Kingdom, 21 feb. 1975, Fayed v. United Kingdom, 25 aug. 1994, Ashingdane v. United Kingdom, 28 may 1985, Garcia Manibardo v. Spain (15 feb. 2000), 29.06.2000, Bellet v. France, 20 nov. 1995, Philis v. Greece, 27 aug. 1991, Tolstoy Miloslavsky v. United Kingdom, 23 jun. 1995:

³ Perez de Rada Cavanilles v. Spain, 28 oct. 1998, Societe anonyme "Sotiris et Nikos Kouras ATTEE" v. Greece (16 nov. 2000), 16 feb. 2001:

սահմանումն է և այդ իրավունքի պատշաճ իրականացման համար պետության կողմից գործուն մեխանիզմների և մատչելի պայմանների ստեղծումն ու երաշխավորումը:

Ըստ Եվրոպական դատարանի դատական պրակտիկայի՝ դատաքննության և դրա մասնավոր տարրը հանդիսացող մատչելիության իրավունքը «բացարձակ իրավունք» չէ և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, հայցի (բողոքի կամ դիմումի) ընդունելիության պայմանների առնչությամբ: Սակայն անձի դատական քննության իրավունքի մատչելիությունը և իրավունքների պաշտպանության միջոցների արդյունավետությունն ապահովելու համար պետությունը կաշկանդված է պատշաճ պայմաններ և մեխանիզմներ մշակելու և երաշխավորելու պարտականությամբ:

ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ՝ «իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամարելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ:

Դատարանի՝ արդարադատության գործառույթ իրականացնելու միակ հիմքը օրենքով սահմանված կարգով իրեն ուղղված դատական պաշտպանության պահանջ պարունակող դիմումների քննությունն է: Առաջին աստիճանի դատարանը որևէ հայեցողություն չունի օրենքին համապատասխանող դիմումին ընթացք տալու կամ չտալու հարցում՝ այն պետք է ընդունվի վարույթ և քննվի անվերապահորեն և առանց որևէ բացառության: Օրենքին չհամապատասխանող դիմումները վարույթ չեն ընդունվում, սակայն, եթե դրանք ժամանակին շրջվում են, ապա կարող են վերստին ներկայացվել: Այլ է իրավիճակը վերադաս դատական աստիճաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս աստիճաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն:

Օրենսդիր մարմնի խնդիրն է ազգային դատավարական իրավունքում ամրագրելու անգործության հաղթահարման արդյունավետ մեխանիզմներ: Հարցը վերաբերում է դատական պաշտպանության արդյունավետ միջոցների երաշխավորմանը՝ հենց անգործության դեմ գործուն իրավական երաշխիքներ ձեռնարկելու եղանակով, ապահովելու և երաշխավորելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը»¹:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշման մեջ մասնավորապես արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմերի ընդհանուր բովանդակությունից հետևում է.

...գ) ընթացիկ օրենսդրության խնդիրն է նյութական և ընթացակարգային նորմերի միջոցով սահմանել ու մանրամասնել ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակից բխող, այնպես էլ ընդհանուր իրավասության և մասնագիտացված սփորադաս դատարանների լիազորությունների շրջանակը,

¹ ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:

իրականացման կարգն ու պայմանները...» (ընդգծումը կատարված է Կենտրոնի կողմից):

Կամ, ՀՀ Սահմանադրական դատարանն իր 08.10.2008 թիվ ՍԴՈ-765 որոշմամբ արձանագրել է.

«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հստակ ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծվել է, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ նաև քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարանի մատչելիությունը»:

15.07.2011թ. թիվ ՍԴՈ-984 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը հատուկ նշել է. «Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման ինստիտուտի ողջ բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով ապահովվում է խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը: Խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (*restitutio in integrum*): Այն դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում...»:

Ինչ վերաբերում է իրավական որոշակիության սկզբունքը հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր պրակտիկայում բազմիցս անդրադարձել է **լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի** սկզբունքին:¹

«Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ

¹ Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2010 թիվ ՍԴՈ-881, 09.09.2008 թիվ ՍԴՈ-758 որոշումները:

բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համարեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է **անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները**: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:¹

* * *

Սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում քննարկվող նորմի՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունը հետևյալն է.

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ե» ենթակետով նախատեսված դատարանին միջնորդություն է ներկայացվել վճիռը չեղյալ ճանաչելու կամ վճռի կատարումը կասեցնելու վերաբերյալ, ապա դատարանը, որտեղ հայցվում են վճռի ճանաչումը և հարկադիր կատարումը, կարող է իր հայեցողությամբ հետաձգել իր կողմից կայացվելիք որոշումը, ինչպես նաև վճռի ճանաչումը և հարկադիր կատարումը հայցող կողմի միջնորդության հիման վրա՝ պարտադրելով մյուս կողմին ներկայացնելու համազոր ապահովում:

Քննարկվող նորմի բովանդակությունն ու իրավակիրառական նշանակությունն անհրաժեշտ է քննարկել մի շարք այլ օրենսդրական դրույթների հետ համադրության համատեքստում:

Այսպես, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

1. Արբիտրաժային տրիբունալի վճռի վիճարկումը դատարանում կարող է իրականացվել միայն սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին համապատասխան այն չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմելու ճանապարհով:

2. Արբիտրաժային տրիբունալի վճիռը կարող է **չեղյալ ճանաչվել** սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դատարանի կողմից:

«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն

1. Արբիտրաժային տրիբունալի վճիռը, որը կայացվել է Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին Նյու Յորքի կոնվենցիայի անդամ որևէ այլ պետության տարածքում, **պետք է ճանաչվի որպես պարտադիր** և համապատասխան դատարանին գրավոր միջնորդելու դեպքում կատարվի սույն հոդվածին և 36-րդ հոդվածին համապատասխան:

¹ ՀՀ սահմանդրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՌ-1142 որոշումը:

Այսպես, «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ե» ենթակետը սահմանում է.

1. Արբիտրաժային տրիբունալի վճռի ճանաչումը կամ հարկադիր կատարումը, որը կայացվել է Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին Նյու Յորքի կոնվենցիայի անդամ որևէ այլ պետության տարածքում, **կարող է մերժվել** միայն՝ ...

ե) վճիռը դեռևս չի դարձել պարտադիր կողմերի համար կամ չեղյալ է ճանաչվել, կամ դրա կատարումը կասեցվել է այն պետության դատարանի կողմից, որտեղ կամ որի իրավունքին համապատասխան՝ կայացվել է այդ վճիռը,...

«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

2. Սույն օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով, 35-36.2-րդ հոդվածներով նախատեսված գործառույթներն իրականացնում է **Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը**:

Պետք է նկատի ունենալ, որ օրենքի 6-րդ հոդվածը փոփոխվել է 21.12.2017թ. ընդունված և 25.01.2018թ. ուժի մեջ մտած ««Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքով, ՀՕ-37-Ն)¹, համաձայն որի՝

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՕ-55-Ն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում **«Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների»** բառերը փոխարինել «Երևան քաղաքի» բառերով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝

1. Արբիտրաժային տրիբունալի վճռի հարկադիր կատարման համար **կատարողական թերթը** տալիս է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը:

(Մինչև 21.12.2017 ՀՕ-36-Ն օրենքով կատարված փոփոխությունը նշված իրավասությունը պատկանում էր Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին):

...

3. Դիմումի քննության արդյունքներով դատարանը կայացնում է որոշում: Դատարանն իրավունք ունի մերժել կատարողական թերթ տալը «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հիմքերով:

Վերը նշված օրենսդրական կարգավորումների վերլուծությունից հետևում է, որ առևտրային տրիբունալի (արբիտրաժի) վճիռը չեղյալ ճանաչելու, վճիռը որպես պարտադիր ճանաչելու և կատարողական թերթ տալու, ինչպես նաև վճռի

¹ Տե՛ս ՀՀՊՏ 2018.01.15/3(1361) Հոդ.13:

կատարումը կասեցնելու իրավասությունը պատկանում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանին, իսկ մինչև 21.12.2017թ. օրենսդրական փոփոխությունը (սույն գործի քննության ժամանակ գործող իրավակարգավորումների համաձայն) այդ իրավասությունը պատկանում էր **Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին**:

Վերը նշված իրավակարգավորումների և սույն գործի փաստերի լույսի ներքո ստացվում է, որ ըստ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի՝ *եթե Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանին միջնորդություն է ներկայացվել առևտրային արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու մասին, ապա դատարանը, որտեղ միաժամանակ հայցվել է նաև վճռի ճանաչումը և հարկադիր կատարումը, կարող է իր հայեցողությամբ հետաձգել իր կողմից կայացվելիք որոշումը, ինչպես նաև վճռի ճանաչումը և հարկադիր կատարումը հայցող կողմի միջնորդության հիման վրա՝ պարտադրելով մյուս կողմին ներկայացնելու համազոր ապահովում*:

Այսինքն՝ **առևտրային արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու մասին դատարանին միջնորդություն ներկայացված լինելու և նույնիսկ այն վարույթ ընդունված լինելու պարագայում օրենքը դատարանի հայեցողությանն է թողել հետաձգելու իր կողմից կայացվելիք որոշումն՝ առևտրային արբիտրաժի վճիռը որպես պարտադիր ճանաչելու և կատարողական թերթ տալու մասին**:

Դատարանին նման հայեցողությամբ օժտելը, կարծում ենք, չի բխում անձի արդար դատաքննության և արդարադատության մատչելիության սահմանադրական իրավունքից: Բանն այն է, որ նախ արբիտրաժային տրիբունալի կամ առևտրային արբիտրաժի վճռի որպես պարտադիր ճանաչման գործընթացն իր բովանդակությամբ արդար դատաքննության իրավունքի մասն է կազմում այն իմաստով, որ այդ գործընթացն իր էությամբ հանդիսանում է Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված այն կառուցակարգն ու մեխանիզմը, որի շրջանակներում իրավասու դատարանում ստուգվում է արբիտրաժային որոշման օրինականությունը՝ որպես անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորող անհրաժեշտ իրավական նախադրյալ: Հետևաբար, առևտրային արբիտրաժի որոշման ճանաչման գործընթացի իրավաչափությունը պետք է դիտարկել անձի արդար դատաքննության, արդյունավետ դատական պաշտպանության և արդարադատության մատչելիության իրավունքի պրիզմայից:

Ավելին, ինչպես հայտնի է, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը, որի թվին է դասվում նաև իր դեմ ներկայացված պահանջի դեմ **արդյունավետ միջոցներով** և հավասար պայմաններում պաշտպանվելու իրավունքը: Արդար դատական քննության (դատավարության)

իրավունքը ներառում է նաև արդար կատարողական վարույթը՝ հարկադիր կատարման փուլը:

Դատական ակտերի արդյունավետ կատարումը ողջամիտ ժամկետում դիտվում է որպես եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի անբաժանելի մաս:

Այս մոտեցումն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2003թ. սեպտեմբերի 9-ի թիվ 2003(17) հանձնարարականի մեջ¹:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն հաստատել է, որ անդամ պետությունները պարտավոր են երաշխավորել վերջնական դատական վճիռ կամ որոշում ստացած ցանկացած անձի՝ դրա կատարման իրավունքը: Նման վճռի չկատարումը կարող է անձին պատկանող այս իրավունքը դարձնել չգործող և ձևական բնույթ կրող: Համապատասխան օրենսդրությունը պետք է բավականաչափ մանրամասն կարգավորումներ պարունակի, որպեսզի ապահովի գործընթացի **իրավական որոշակիությունը և թափանցիկությունը, ինչպես նաև դարձնի այդ գործընթացը հնարավորինս կանխատեսելի**²:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի նշված հանձնարարականի III կետի 1(g) ենթակետի համաձայն՝ կատարողական գործողությունների ընթացքում պետք է ապահովվի **պահանջատիրոջ և պարտապանի իրավունքների և շահերի պատշաճ (արդար) հավասարակշռություն**՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ և 8-րդ հոդվածներին համապատասխան:

Մարդ իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում ևս վճիռների կատարումը (հարկադիր կատարման փուլը) դիտարկում է որպես արդար դատաքննության նախապայման և բաղադրիչ մաս³: Համաձայն այդ նախադեպերի՝ Ցանկացած դատարանի կողմից կայացված որոշման կատարումը պետք է ամեն դեպքում դիտարկել որպես դատավարություն կոնվենցիայի 6-րդ հոդվածի նպատակներով (իմաստով) ⁴:

ՀՀ սահմանադրական դատարանը 2016 թվականի մարտի 22-ի թիվ ՍԴՌ-1262 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «7. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առևտրի, արդյունաբերության, ներդրումային գործունեության ոլորտում միջազգային կապերի զարգացումը, արտաքին առևտրի շրջանառության աճն անխուսափելիորեն հանգեցնում են տարբեր ազգային իրավական համակարգերի տնտեսվարող սուբյեկտների միջև վեճերի և տարաձայնությունների թվի մեծացմանը: Դրանք գրեթե միշտ ընդդադրա են արբիտրաժային մարմիններին, որոնց վճիռները, որպես կանոն, այլ պետության տարածքում իրավաբանական ուժ են

¹ Recommendation Rec (2003)17 of the Committee of Ministers to member states on enforcement, Committee of Ministers of Council of Europe, 9 September 2003 (տե՛ս հետևյալ հղումը <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=65531>, 02.11.2015:

² Տե՛ս նույն տեղում:

³ Եվրոպական դատարանի Hornsby v. Greece, 19.03.1997թ. որոշումը, կետ 40, կամ Scordino v. Italy, 26.03.2006թ. որոշումը, կետ 196:

⁴ “Execution of a judgment given by any court must therefore be regarded as an integral part of the “trial” for the purposes of Article 6 (art. 6)”:

ստանում միայն այն դեպքում, երբ տվյալ պետությունն այդ առթիվ տալիս է իր համաձայնությունը: Ճանաչման դեպքում այլ պետության տարածքում այդ վճիռները ձեռք են բերում որոշակի հատկանիշներ՝ դրանք են՝ **անհերքելիությունը, բացառիկությունը, ինչպես նաև կատարելիությունը**»:

Նույն կերպ, Կենտրոնը գտնում է, որ քանի դեռ ՀՀ տարածքում ձևավորված և գործող արբիտրաժային տրիբունալի վճիռը չի ճանաչվել ՀՀ իրավասու դատարանի որոշմամբ, այսինքն՝ ձեռք չի բերել անհերքելիության, բացառիկության, ինչպես նաև կատարելիության հատկանիշներ, այն նույնպես չի կարող կատարվել ՀՀ տարածքում, ինչպես չեն կարող կատարվել օտարերկրյա արբիտրաժային որոշումները: Ընդ որում, այդ գործընթացը պետք է իրականացվի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի բոլոր երաշխիքներն ու պայմանները հաշվի առնելով:

Կենտրոնը գտնում է, որ արբիտրաժային վճիռը չեղարկելու մասին միջնորդության և այդ կապակցությամբ դատարանում վարույթ ընդունված գործի առկայության պարագայում այդ նույն արբիտրաժային վճռի պարտադիր ճանաչման և հարկադիր կատարման գործընթացը շարունակելու կամ հետաձգելու (կասեցնելու) դատարանի հայեցողությունը սահմանելն արդյունավետ չէ, քանի որ հետագայում արբիտրաժային վճիռը չեղարկելու պարագայում կարող է առաջանալ նախկին վիճակը վերականգնելու դժվարություն կամ անհնարինություն այդ վճռի արդեն իսկ կատարված լինելու պատճառով, ինչի արդյունքում կարող են խախտվել վճռի հարկադիր կատարման արդյունքում վնասներ կրած կողմի իրավունքներն ու շահերը: Ավելին, արբիտրաժային վճռի կողմերի համար դատարանին նման հայեցողություն վերապահելու պարագայում իրավական որոշակիության տեսանկյունից կանխատեսելի չի լինի վճռի ճանաչման կամ չեղարկման գործընթացը այն առումով, որ կողմերը չեն կարողանա կանխատեսել, թե ինչպիսի հայեցողություն կդրսևորի դատարանը գործի քննությունը շարունակելու կամ հետաձգելու հարցում:

Իրավական որոշակիության տեսանկյունից անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել նաև արբիտրաժային վճռի ճանաչման և այդ նույն վճռի չեղարկման միջնորդությունների քննության գործընթացում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված՝ գործի վարույթի կասեցման ինստիտուտի կիրառման հնարավորության հարցը:

Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն՝

1. Հայաստանի Հանրապետության դատարաններում (այսուհետ՝ դատարաններ) քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով և դրանց համապատասխան ընդունված այլ օրենքներով:

Այլ օրենքներում (բացառությամբ սնանկության վարույթը կարգավորող օրենքների) պարունակվող քաղաքացիական դատավարության իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված են դատավարության այլ նորմեր, քան նախատեսված են Հայաստանի

Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

3. Քաղաքացիական գործերով դատավարությունն իրականացվում է գործի քննության ժամանակ գործող օրենքներով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն՝

Դատարանը **պարտավոր է** կասեցնել գործի վարույթը, եթե՝

1) անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը:

Մեջբերված քաղաքացիադատավարական նորմերից հետևում է, որ նախ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերություն): Ընդ որում, իրավակիրառ պրակտիկայում նշված օրենսգրքի և այլ օրենքների միջև հակասություն ծագելու դեպքում կիրառման է ենթակա օրենսգիրքը՝ որպես առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածը նախատեսել է գործի վարույթը կասեցնելու պարտադիր (ոչ հայեցողական) հիմք այն դեպքերի համար, երբ անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը:

Այսպիսով, իրավակիրառական պրակտիկայում որոշակի չէ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման հնարավորության հարցը: Ուստի, այս իմաստով ևս «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի իրավական որոշակիությունը խնդրահարույց է:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

«Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը և իրավակիրառական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց է:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան